

ոմանք երկիրս ալ «սկտեղ» (δίσκος) նմանեցոյին (Վեցօր. 181): Վերջապէս Եղիշէի «սկտեղք» յոգնակին նշան է անոնց բազմաւորութեան մի եւ նոյն սեղանի վրայ, այսինքն ճաշողաց թուոյն համեմատ. վասն զի պատմիչը նոյն տեղ եզակի ձայնով կը խօսի՝ երբ նիւթը բազմաւոր չէ. «չանկաւ օշնան ի ձեռս... եւ ոչ մատուցաւ իւղ»: — Սոյն սպասս կը գործածուէր եւս գինւոյ տաշտը կոչնականաց մատուցանելու. եւ այն ժամանակ կը կոչուէր «բաժակալ՝ սկուտղ» (Փաւս. 233), կամ լոկ «բաժակակալ» (Եղիշ. 171): Եւ իբրեւ ծաղկանց անօթ դրուելով սեղանին վրայ, կը դառնար «ծաղկակալ սկուտղ» (Խոր. 142):

Մաղզմայ: Մին ս. սեղանոյն նուիրանոցներէն, եւ այսպէս կոչուած Ք. դարու հնագոյն մաշտոցէն եւ յայլոց որ ի Ս. Ղազար, ինչպէս եւ Լամբրոնացիէն (Պտր. 84), կը համարիմ թէ նոյնպէս էր Ե դարուն ալ, որով Մնացորդաց առաջին թարգմանութիւնը կը թուէ զայն Տաճարի նուիրական սպասուց մէջ, «մաղզմայիցն ոսկոցն» (Ա, ԻԸ, 17), ուր նշմարելի է ս.

1. Այդպէս ըստ բոլորագիր ու նոտագիր երկու օրինակաց Վենետիոյ, եւ «բաժակալ» ըստ երկու նոտագրոց. չորսն ալ անթուական են: